

ԲԱՌԱԽԱՂԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ*

Գայանե Սարգսյան
Երևանի պետական համալսարան

[...] *celui qui traduit avec la prétention de remplacer l'original, fait comme quelqu'un qui voudrait donner à un amoureux une autre femme en échange de celle qu'il aime: une femme équivalente, semblable, mais l'amoureux est amoureux de celle-ci, et non pas de ses équivalents [...]*

(Կրոչե Բ. 1991)

Բառախաղերի թարգմանության գործընթացում թարգմանիչը հաճախ առկա է դարձնում այն, ինչ բնագրում ներակա է՝ ելնելով բնագիրն ընթերցողի և թարգմանությունն ընթերցողի լեզվական և ճանաչողական տարբերությունից, քանզի այն ինչ ակնհայտ է առաջինի համար, երկրորդի համար կարող է բացարձակ անհասկանալի լինել: Սույն հոդվածը լուսաբանում է այն խնդիրները, որոնք ծագում են բառախաղերի թարգմանության գործընթացում: Հիմնվելով Օնորե դե Բալզակի *Շագրենի կաշին* վեպից քաղված օրինակների վրա՝ վեր է հանվում *ոչ ճիշտ* թարգմանության ազդեցությունը ստեղծագործության ընկալման վրա:

Բանալի բառեր. բառախաղ, թարգմանություն, անհատական արտահայտչամիջոց, հանրայնացված արտահայտչամիջոց:

Ներածություն

Բառախաղերի թարգմանությունը մինչ օրս համարվում է թարգմանության ամենաբարդ խնդիրներից մեկը: Որոշ լեզվաբաններ հարում են այն կարծիքին, որ բառախաղերը թարգմանել ընդհանրապես հնարավոր չէ՝ փաստարկելով, որ բառախաղերի հնչյունային նույնությունը կամ նմանությունը պատահականության արդյունք է, ուստի՝ ոչ թարգմանելի այլ լեզվով:

Կա նաև այն կարծիքը, որ բառախաղերը ավելի հաճախ ընկալվում են որպես հեղինակային ոճ, ինչի հետևանքով էլ այլ լեզվով թարգմանելը խնդիր է առաջացնում:

Բառախաղերի թարգմանության գործընթացում թարգմանիչը հաճախ առկա է դարձնում այն, ինչ բնագրում ներակա է՝ ելնելով բնագիրն ընթերցողի և թարգմանությունն ընթերցողի լեզվական և ճանաչողական տարբերությունից, քանզի այն ինչ ակնհայտ է առաջինի համար, երկրորդի համար կարող է բացարձակ անհասկանալի լինել: Մեր կարծիքով միտումնավոր հրաժարվել բառախաղից, փոխարինելով վերջինս հարասույթով, կնշանակի կորցնել տեքստի

* Հոդվածն ընդունվել է տպագրության 22.11.2016:

ոճական և առանձնահատկությունները: Թարգմանիչը պետք է կարողանա այդ առանձնահատկությունները փոխանցել այնպես, որ ընթերցողը *մտնի* տեքստի մեջ և ըմբռնի վերջինիս ներակա իմաստը:

Այսպիսով, սույն հոդվածի նպատակն է լուսաբանել այն խնդիրները, որ կարող է առաջացնել բառախաղերի թարգմանությունը: Հիմնվելով Օնորե դե Բալզակի *Շագրենի կաշին* վեպից քաղված օրինակների վրա՝ փորձ է արվում ցույց տալու, թե ինչպես է ազդում *ոչ ճիշտ* թարգմանությունը ստեղծագործության ընկալման վրա:

Բառախաղի թարգմանության խնդիրները Օնորե դե Բալզակի *Շագրենի կաշին* (*La peau de chagrin*) վեպում

Ուսումնասիրենք *peau* եզրույթը, թե՛ վերնագրում և թե՛ տեքստից բերված օրինակներում: Ծանոթ լինելով Բալզակի ստեղծագործական ոճին՝ կասկած չունենք, որ եզրույթի ընտրությունը պատահական չէ: XII-րդ դարից սկսած *peau* եզրույթը ֆրանսերենում գործածվել է ցույց տալու համար մարդու մաշկը և որոշ կենդանիների աճյունը: Այսպիսով՝ եզրահանգում անելն այնքան էլ դժվար չէ: *Peau* բառն արտահայտում է միաժամանակ կյանքի և մահվան իմաստները: Մինչ օրս ֆրանսերենում պահպանվել են արտահայտություններ, որոնցում նշված եզրույթը գործածվում է երկու իմաստներով էլ: Օրինակ՝ *faire la peau de quelqu'un* նշանակում է մեկին զրկել կյանքից, *laisser sa peau*՝ մահանալ, *tenir a sa peau*՝ կառչած լինել կյանքից, *risquer sa peau*՝ կյանքը վտանգի ենթարկել: Վերադառնալով *Շագրենի կաշին* ստեղծագործությանը՝ նշենք, որ վեպի հերոսը անկասկած վտանգի է ենթարկում իր կյանքը՝ ձեռք բերելով թախսմանը: Այսպիսով, Բալզակը, վերնագրում համադրելով *peau* եզրույթի կաշի և կյանք իմաստները, իսկ *chagrin* եզրույթի ցավ, վիշտ և կենդանի իմաստները, բառախաղի միջոցով ներկայացնում է ողջ ստեղծագործության հիմնական դրույթը, որն է՝ երկարակեցության գաղտնիքը մարդու ներքին էներգիայի խնայողաբար օգտագործման մեջ է: Ինչքան շատ են ցանկությունները՝ տարբեր բնույթի կենցաղայինից մինչև ամենավեհը, այնքան ավելի արագ է մարդը մոտենում մահվան շեմին: Հիշենք Բալթազար Քլայոսին, Լուի Լամբերին, Սերաֆիթային և այլոց:

Այժմ ուսումնասիրենք վեպից վերցրած որոշ հատվածներ, որոնց ֆրանսերեն տարբերակում ունենք բացահայտ բառախաղ, մինչդեռ հայերեն տարբերակում այն իսպառ բացակայում է: Ինչպես վերը նշեցինք, բառախաղը նաև հեղինակի ոճն է, ուստի վեպի հայերեն ընթերցողը զրկվում է Բալզակի ոճի առանձնահատկություններն ընկալելու հնարավորությունից: Ներկայացնենք օրինակներ.

[...] *Il ne voulut pas emporter une énigme en plus dans la tombe, et retourna promptement la peau, comme un enfant pressé de connaître les secrets de sonjouet nouveau* [...]

(Balzac1979:82)

Հայերեն տարբերակը հնչում է այսպես.

[...] Նա չուզեց իր հետ գերեզման տանել մի նոր հանելուկ և իսկույն **չուռ տվեց կաշին**, նման այն երեխային, որ շտապում է իր նոր խաղալիքի գաղտնիքներն իմանալ [...]

(Բալզակ 1957:84)

Հիշեցման կարգով նշենք, որ սա վեպի այն հատվածն է, երբ Ռաֆայել դե Վալանտենը պատրաստվում է պայմանագիր կնքել հնավաճառի հետ և այսպիսով *retourner sa peau* փոխել իր կյանքը: Հայերեն օրինակում բառախաղ չկա, ինչի արդյունքում էլ հայ ընթերցողին հասու չի դառնում բալզակյան ոճի առանձնահատկությունները: Շարունակելու համար ուսումնասիրենք մեկ այլ օրինակ՝

[...] *le cercle de vos jours, figuré par cette peau, se resserrera suivant la force et le nombre de vos souhaits, depuis le plus léger jusqu'au plus exorbitant* [...]

(Balzac 1979:88)

Հայերեն տարբերակը

[...] *Այս կաշվով նշված ձեր օրերի շրջանակը կսեղմվի՝ համաձայն ձեր ցանկությունների ուժի և թվի, սկսած ամենաչնչին ցանկություններից մինչ ամենասանձարձակը* [...]

(Բալզակ 1957:90)

Բնագրում Բալզակը՝ իրեն բնորոշ վարպետությամբ, բառախաղի օգնությամբ, մի նախադասությամբ ներկայացնում է մի ամբողջ փիլիսոփայություն, որտեղ ցույց է տալիս միաժամանակ կենդանու կաշին և գլխավոր հերոսի կյանքը: Բալզակը այսպիսով ցույց է տալիս, որ Ռաֆայելի յուրաքանչյուր ցանկություն իր կյանքի հաշվին է, իսկ եզրույթը ավելի է շեշտում այս գաղափարը: Հայերեն տարբերակում կրկին հանդիպում ենք բառի զուտ բառարանային թարգմանությանը, որտեղ, եթե օգտագործենք բալզակագետների եզրույթը՝ *բալզացիզմները* բացարձակ չեն զգացվում: Միայն վեպի համատեքստն է օգնում բնագրի լեզուն չտիրապետող ընթերցողին հասկանալ, որ խաղասեղանին դրված է Ռաֆայելի կյանքը: Շարունակելով վեպի ընթերցումը, տեսնում ենք թե ինչպես է Ռաֆայելը զուր ջանքեր գործադրում, որպեսզի մեծացնի կաշին, կամ այլ կերպ ասած երկարացնի իր կյանքը: Մեկ անգամ ևս համոզվում ենք, որ վերնագրի ընտրությունը պատահական չէ, այն բավականին երկար մտածված աշխատանքի արդյունք է: Չէ՞ որ, ինչպես նշում է վեպի գիտակ Պլանշետը [...] *Cette peau me semble posséder une force de résistance contre laquelle rien ne peut prévaloir* [...]

(Balzac 1979): Բնականաբար ո՛չ մի գիտնական, ո՛չ մի բժիշկ չի կարող ազդել կաշվի վրա, այսինքն՝ Ռաֆայելի կյանքի և ճակատագրի վրա:

Ռաֆայելն ինքն էլ միաժամանակ տերն ու ստրուկն է կաշվի, այսինքն՝ իր կյանքի: Ինչպես նկատեցինք ողջ ստեղծագործության ընթացքում Բալզակն իրեն հատուկ հմտությամբ հերթագայում է *peau* եզրույթի տարբեր իմաստները, մինչդեռ հայերեն ընթերցողը հնարավորություն չունի ո՛չ ըմբռնելու իմաստների այս հերթագայությունը, ո՛չ էլ գնահատելու բալզակյան ոճի այս առանձնահատկությունը: Ասել, որ սա թարգմանության թերությունն է, թերևս կինչի կոպիտ,

բայց չփաստել, որ թարգմանությունը երբեմն հնարավորություն չի տալիս ընթերցողին ըմբռնել ստեղծագործության ներակա իմաստը՝ անհրաժեշտ է:

Վերնագրի հաջորդ եզրույթի՝ *chagrin*-ի ընտրությունը նույնպես պատահական չէ: Ուսումնասիրենք վերջինիս ստուգաբանությունը.

- Le Petit Robert: 1. Irritation; humeur maussade. 2. Etat moralement douloureux = affection, douleur, mal, peine, souffrance, tristesse. 3. Peine ou déplaisir causé par un événement précis = contrariété, deception, ennui.
- Tresor de la langue française: espèce de cuire grenu, préparé avec la peau de la croupe du mulet, de l'âne ou de cheval, utilisé en reliure ou en maroquinerie de luxe. Sagri (croupe d'un animal, la peau qu'on en prépare)

Վեպում Բալզակը բառարանային ճշգրտությամբ ներկայացնում է, որ *Sagri* բառը փոխառվել է թուրքերենից, այնուհետև հնչյունային փոփոխություններ կրելով, XV-րդ դարում դարձել է *peau de sagrin*, *peau chagrain*, իսկ XVII-րդ դարից սկսած՝ *peau de chagrin*:

Այսպիսով, Բալզակը ընտրում է *chagrin* եզրույթը՝ կաշի, թալիսման և վիշտ, ցավ, հիասթափություն իմաստները՝ հերթագայելու նպատակով: Չէ՞ որ Ռաֆայելը ձեռք բերելով շագրենի կաշի-թալիսմանը՝ միաժամանակ ձեռք է բերում կյանքից զրկվելու ցավը: Օգտագործելով արտահայտությունը՝ Բալզակը ակնհայտորեն բառախաղ է անում, քանի որ հայտնի է, որ զլխավոր հերոսը մահանում է շագրենի պատճառով, որը ֆրանսերենում, ինչպես նշեցինք, նշանակում է *վիշտ* և *կաշի*: Հայերեն տարբերակում այս հերթագայությունը ամբողջությամբ բացակայում է:

Եզրակացություն

Այս մի քանի օրինակները ցույց են տալիս, որ բառախաղի թարգմանությունը դեմոտատիվ մակարդակում նպաստում է վերջինիս ինքնատիպության կորստին՝ անցում կատարելով անհատական խոսքից կանոնավոր խոսքի, անհատական արտահայտչամիջոցից՝ հանրայնացված արտահայտչամիջոցի, ինչն էլ հանգեցնում է տեքստի բնույթի մասնակի կամ ամբողջական փոփոխմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բալզակ, Օ. դե (1957) *Մարդկային կատակերգություն*. Երևան: Հայպետհրատ:
2. Ballard, M. (1992) *De Ciceron à Benjamin. Traducteurs, traductions, réflexion*. Lille: Presses Universitaires de Lille.
3. Ballard, M. (1990) *Études réunies, La traduction Plurielle*. Lille: Presses Universitaires de Lille.
4. Ballard, M. (2005) *La traduction, contact de langues et de cultures*. Artois: Presses Université.

5. Balzac, H. de (1979) *La Comedie Humaine*. Paris: Gallimard (Collection de la Pléiade).
6. Klinker, Th. ; Wetzel, H. (1998) *Textes recuillis, Traduction=Interprétation, Interprétation=Traduction, L'exemple de Rimbaud*. Actes du Colloques de Ratisbonne (21-23, septembre 1995). Paris: Honoré Champion.
7. Mounin, G. (1963) *Les problèmes théoriques de la traduction*. Paris: Gallimard.
8. Mounin, G. (1994) *Les Belles Infidèles*. Lille: Presses Universitaires de Lille.

Wordplay: Problems of Translation

It is in the process of translation that the expressive peculiarities of languages and the preferences given to this or that linguistic structure occur. The present article is devoted to the study of a number of problems that the translator faces while translating wordplay. Taking into consideration the translation of the novel *La Peau de Chagrin* by Honoré de Balzac from French into Armenian we have tried to reveal the problem that inadequate translation of wordplay may lead to the misunderstanding of the whole novel. Studying the words *la peau* and *le chagrin* which are used both in the title and in the whole text we have interpreted the original form, in which the author, with the help of wordplay leads to destruction the principal thesis of *Les Etudes Philosophiques* which involves the idea of reaching perfection in any sphere and equaling with God. However, this is not illustrated in the Armenian translation.

Некоторые проблемы перевода игры слов

Основная сложность художественного перевода заключается не только в передаче смысла, но в передаче уникального авторского стиля произведения, его эстетики, богатства языковых средств, а также атмосферы, характера и настроения, заложенных в тексте. Одним из таких языковых средств является игра слов. В данной статье на примере романа «Шагреневая кожа» Оноре де Бальзака, предпринимается попытка показать, как неадекватный перевод игры слов может полностью или частично изменить характер произведения, восприятие его читателем на целевом языке.